Հագվի

Մակերես՝ 11,84կմ^2

Բնակչություն՝ 501

Լոռու մարզի Հագվի գյուղը գտնվում է հանրապետության հյուսիս-արեւելքում, Ալավերդի քաղաքից 15 կմ հեռավորության վրա: Չնայած գյուղը հիմնադրվել է 17-րդ դարում, գյուղում կա փոքրիկ եկեղեցի, որը կառուցվել է 12րդ դարում:
Գյուղը գտնվում ՝ ծովի մակերեւույթից 1200 մ բարձրության վրա: Գյուղի կլիման բարեխառն է, ձմեռը մեղմ, ամառը՝ զով:
Համայնքի հողատարածությունները ամբողջովին զրկված են ոռոգման ջրից, որի պատճառով հնարավոր չէ լիարժեք կազմակերպել գյուղմթերքների արտադրություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է ցորենի եւ կարտոֆիլի արտադրությամբ: Հողի բերքատվությունը կախված է տարվա եղանակներից: Վարելահողերը մեծամասամբ դրված են անասնակերի տակ: Անասնակեր ներմուծվում է նաեւ հարեւան գյուղերից: Անասնապահությամբ զբաղվողները արտադրում են կաթ, միս, ձու, մեղր, բուրդ: